

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԹՎՈՎ 23 ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ՝ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԴՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի 19.12.2017թ-ի N102-Ա կարգադրությունը և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի համաձայնությունը՝ ՀՀ Արմավիրի մարզի թվով 23 համայնքներում 2017թ. դեկտեմբերի 21-ից 22-ը, ըստ ժամանակացույցի և հարցաշարի, իրականացվել է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների կողմից տրված խնամակալության մասին դրական եզրակացությունների իրավական հիմքերի ուսումնասիրություն: Ուսումնասիրությամբ ընդգրկված ժամանակահատված է ընդունվել 2014 թվականի օգոստոսից մինչև ուսումնասիրությունն սկսելու օրը:

Ուսումնասիրվել են թվով 76 սովորողների ծնողների օրինական ներկայացուցիչներին խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների կողմից տրված խնամակալության մասին դրական եզրակացությունների իրավական հիմքերը: Ծնողների օրինական ներկայացուցիչների (խնամակալների) օտարերկրյա քաղաքացի լինելը հիմք է հանդիսանում հանրակրթական ուսումնական հաստատություններում խնամարկյալի ուսուցումը ռուսերենով ուսուցմամբ դասարանում կազմակերպելու համար:

Ուսումնասիրությամբ պարզվել է.

Եղեգնուտ համայնք

Արմավիրի հ. 5 հիմնական դպրոցի տնօրենի՝ 17.01.2017թ. հ. 256 հրամանով առաջին դասարանի սովորող Ստեփան Նարեկի Հայրապետյանը տեղափոխվել է ռուսական դասարան, քանի որ վերջինիս ծնողների օրինական ներկայացուցիչ է համարվել սովորողի քեռին՝ ՌԴ քաղաքացի Արայիկ Կարապետի Կարապետյանը (Եղեգնուտ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից խնամակալության մասին դրական եզրակացությունը տրվել է 16.11.2016թ.): Ըստ համայնքի ներկայացրած տեղեկանքի՝ երեխան ներկայումս ապրում է ծնողների հետ՝ Արմավիր քաղաքում:

Ջանֆիդա համայնք

Արմավիրի հ. 5 հիմնական դպրոցի 1-ին դասարանի սովորող Մերի Վրեժի Աբրահամյանի (31.08.2016թ.), 2-րդ դասարանի սովորող՝ Վաղիմ Արթուրի Աբալյանի (25.08.2015թ.) ծնողների օրինական ներկայացուցիչ Երեմ Հմայակի Երեմյանին խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից տրված խնամակալության մասին դրական եզրակացության իրավական հիմքերն առկա չեն: Դպրոցում առկա են խնամակալության համապատասխան որոշումների պատճենները:

Շենավան համայնք

Արմավիրի հ. 5 հիմնական դպրոցի տնօրենի՝ 17.01.2017թ. հ. 256 հրամանով երկրորդ դասարանի սովորող Աշոտ Արթուրի Սիմոնյանը տեղափոխվել է ռուսական դասարան, քանի որ վերջինիս ծնողների օրինական ներկայացուցիչ է համարվել սովորողի քեռին՝ Ուկրաինայի քաղաքացի Նորայր Գևորգի Սահակյանը: Շենավան համայնքի խնամակալության և

հոգաբարձության հանձնաժողովի կողմից 12.01.2017թ. տրված խնամակալության մասին դրական եզրակացության իրավական հիմքերը չեն ներկայացվել: Շենավան համայնքի ղեկավարի տեղակալ, խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նախագահ Ա. Պողոսյանն իր բացատրության մեջ նշել է, որ Աշոտ Արթուրի Սիմոնյանի խնամակալ Գևորգ Նորայրի Սահակյանն այժմ Հայաստանի Հանրապետությունում չի բնակվում, սակայն խնամակալություն նշանակելիս հանձնաժողովը տեղյակ է եղել, որ վերջինս ծնողական իրավունք ունեցող չափահաս գործունակ անձ է և բնակվում է Շենավան համայնքում՝ խնամարկյալի հետ համատեղ:

Նալբանդյան համայնք

Նալբանդյան համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից խնամակալության մասին դրական եզրակացություն է տրվել Արմավիրի հ. 5 հիմնական դպրոցի 1-ին դասարանի սովորողներ Խաչատուր Պողոսի Մկրտչյանի, Դավիթ Ռուբենի Մարգարյանի (14.10.2016թ.) և 2-րդ դասարանի սովորող Հակոբ Սուրիկի Մարտիրոսյանի (16.08.2015թ.) ծնողների օրինական ներկայացուցիչների վերաբերյալ, մինչդեռ անչափահաս քաղաքացիների խնամակալները չեն ապրում իրենց խնամարկյալների հետ համատեղ: Կարևոր է նշել, որ վերոնշյալ երեք երեխաների համար էլ խնամակալ է հանդիսացել Ուկրաինայի քաղաքացի Գրիգոր Ռուլանդի Մկրտչյանը:

Նորապատ համայնք

Նորապատ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից խնամակալության մասին դրական եզրակացություն է տրվել Արմավիրի հ. 5 հիմնական դպրոցի 2-րդ դասարանի սովորող Կարեն Ռուբիկի Ստեփանյանի ծնողների օրինական ներկայացուցիչ վերաբերյալ (03.09.2015թ.), մինչդեռ անչափահաս քաղաքացու խնամակալը չի ապրում իր խնամարկյալի հետ համատեղ: Ավելին, խնամակալը չի բնակվում ՀՀ տարածքում:

Սարդարապատ համայնք

Սարդարապատ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից խնամակալության մասին դրական եզրակացություն է տրվել Արմավիրի հ. 5 հիմնական դպրոցի 3-րդ դասարանի սովորող Արամե Վիրաբի Ավետիսյանի ծնողների օրինական ներկայացուցիչ վերաբերյալ (15.09.2014թ.), մինչդեռ համայնքապետարանում հիմքեր չեն ներկայացվել անչափահասի նկատմամբ խնամակալություն սահմանելու պատճառի, խնամակալը ծնողական իրավունք ունեցող քաղաքացի լինելու, անչափահաս քաղաքացու խնամակալը խնամարկյալի հետ համատեղ ապրելու վերաբերյալ:

Սարդարապատ համայնքի ղեկավար Բ. Վարդանյանն իր պարզաբանման մեջ նշել է, որ նույն համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի փաթեթներում չեն պահպանվել խնամակալության հետ կապված որոշ փաստաթղթեր, քանի որ հանձնաժողովի քարտուղար Գ. Անտոնյանը 2016 թվականից ազատվել է աշխատանքից՝ իր հետ տանելով այդ փաստաթղթերը:

Վանանդ համայնք

Արմավիրի հ. 5 հիմնական դպրոցի 3-րդ դասարանի սովորող Ստեփան Ալեքսանդրի Համբարձումյանի ծնողների օրինական ներկայացուցիչ վերաբերյալ Վանանդ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից 12.08.2014թ. տրված

խնամակալության մասին դրական եզրակացության իրավական հիմքերը չեն ներկայացվել: Վանանդ համայնքի ղեկավար Զ. Մանուկյանի բացատրության համաձայն՝ խնամակալությանը վերաբերող փաստաթղթերը չեն պահպանվել՝ գյուղապետարանի վարչական շենքի վերակառուցման հետ կապված տեղափոխությունների պատճառով, իսկ Ստեփան Ալեքսանդրի Համբարձումյանը և նրա խնամակալ Վահե Ալբերտի Միրզոյանը ներկայումս բնակվում են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս: Ըստ դպրոցի տնօրենի տվյալների երեխան շարունակում է ուսումը ռուսերենով ուսուցմամբ 4-րդ դասարանում:

Մյասնիկյան համայնք

Արմավիրի հ. 5 հիմնական դպրոցի տնօրենի՝ 31.08.2015թ. հ. 91 հրամանով ՌԴ-ից վերադարձած Լիլիթ Շալիկոյի Խաչատրյանը ընդունվել է 4-րդ ռուսերենով ուսուցմամբ դասարան՝ մինչև տվյալ ուսումնական տարվա ավարտը: Մյասնիկյան համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի՝ 07.09.2016թ. թիվ 2-Ա որոշման համաձայն, ՌԴ քաղաքացի Արարատ Գևորգի Կիրակոսյանը ճանաչվել է վերջինիս խնամակալ, ինչն էլ հիմք է հանդիսացել երեխայի ուսումը ռուսերենով ուսուցմամբ դասարանում շարունակելու համար (որոշման պատճենն առկա է): Մյասնիկյան համայնքի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ համայնքապետարանում Լիլիթ Շալիկոյի Խաչատրյանի նկատմամբ խնամակալ նշանակելու վերաբերյալ որոշում չի կայացվել:

Խախտվել են հետևյալ իրավական ակտերի պահանջները.

ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ	Համայնք
Քաղաքացիական օրենսգիրք	
<p>23-րդ հոդվածի 2-րդ կետ. «Տասնչորս տարեկան չդարձած անչափահասների կամ խնամակալության տակ գտնվող քաղաքացիների բնակության վայր է համարվում նրանց օրինական ներկայացուցիչների՝ ծնողների, որդեգրողների կամ խնամակալների բնակության վայրը»:</p>	<p>Նալբանդյան համայնք (3 դեպք), Վանանդ համայնք (1 դեպք), Շենավան համայնք (1 դեպք), Նորապատ համայնք (1 դեպք), Եղեգնուտ համայնք (1 դեպք), Ջանֆիդա համայնք (1 դեպք)</p>
<p>38-րդ հոդվածի 2-րդ կետ. « Անչափահաս քաղաքացիների խնամակալները և հոգաբարձուները պարտավոր են իրենց խնամարկյալների հետ ապրել համատեղ»:</p>	<p>Նալբանդյան համայնք (3 դեպք), Վանանդ համայնք (1 դեպք), Շենավան համայնք (1 դեպք), Նորապատ համայնք (1 դեպք), Ջանֆիդա համայնք (1 դեպք)</p>
<p>ՀՀ կառավարության՝ 09.03.2006թ. «Պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկը հաստատելու մասին» N351 որոշմամբ հաստատված հավելված</p>	
<p>Հավելվածի 5-րդ կետ. «Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հանձնաժողովների արձանագրությունները և որոշումները՝ կից փաստաթղթերով պահպանվում են մշտական»:</p>	<p>Ջանֆիդա, Շենավան, Սարդարապատ, Վանանդ, Մյասնիկյան համայնքապետարաններ</p>

Վերլուծության և գնահատման բաժին